

---

---

**ՄԻԳԵԼ ԴԵ ՈՒՆԱՄՈՒՆՅԻ  
ԿԻՆՈՏԻԶՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԿՐՈՆ**

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Լ. Ն.

Արդեն չորս հարյուր տարի է՝ անմահ թափառական ասպետը ճամփորդում է երկրից երկիր, մշակույթից մշակույթ, սերնդից սերունդ՝ խղճահարության ու ծիծաղի արցունքներ քամելով մարդկանց աչքերից ու հոգիներից՝ ապացուցելով համայն մարդկությանը, որ ինքն անմահ է:

«Ո՞վ է Դոն Կիխոտը, ի՞նչ է ներկայացնում նա իրենից,– հարցնում է Բ. Ս. Տուրգենևը և պատասխանում,– հավատ, հավատ հավերժության ու ճշմարտության գոյության հանդեպ»: Նա նվիրյալն է գաղափարի, հանուն որի պատրաստ է կրել ամեն տեսակ զրկանք, գոհաբերել կյանքը: Իր սեփական կյանքը նա գնահատում է այնքան, որքան այն կարող է ծառայել որպես գաղափարն իրականացնելու միջոց:

Քսաներորդ դարակազմին Դոն Կիխոտի կերպարը բովանդակային այլ մեկնաբանությունն ստացավ, այն առավել կարևորվեց մասնավորապես Միգել դե Ունամունոյի մոտ՝ դառնալով նոր փիլիսոփայական գաղափարախոսության խորհրդանիշ:

Կիխոտը դարձավ ազգային մտածելակերպի ու փիլիսոփայության կրողը, իսկ կիխոտիզմը՝ իսպանացու հավատի յուրատեսակ դրսևորում, մի տեսակ կրոն, որ կփրկեր անտարբերության ճահճում թաղված Իսպանիան:

Ունամունոյի Դոն Կիխոտը ազգային բարոյականության կրողն է ու անմահության անվիճելի հավակնորդը: Այդ բարոյականությունը հիմնված է նախապաշարումներից գերծ իրական հավատի ու ազատության սկզբունքի վրա, հատկապես ազատության, քանի որ մարդը դուրս է կանոնակարգված դատություններով ու սահմանափակ մաթեմատիկական բանաձևերով պայմանավորված գիտական ճանաչողության սահմաններից, մարդն անհամեմատ ավելի լայն է, պարադոքսալ, անկառավարելի, և որ ամենակարևորն է, նա ազատ է, ազատ, ինչպես Ունամունոյի Դոն Կիխոտը, ինչպես Սերվանտեսի Դոն Կիխոտը:

Սերվանտեսը դուրս է հանել Դոն Կիխոտին ազգային մտածողության խորխորատներից ու իր անմահ գրքով վերադարձրել նրան իսպանացուն: Նա արդեն չի պատկանում Սերվանտեսին, այլ բոլոր նրանց, ովքեր կարդում ու զգում են նրան: Իսկ Ունամունոյի համար այդ ազատությունը դարձավ անհրաժեշտություն՝ կորսված արժեքների վերարժեքավորման ճանապարհին, դարձավ յուրատեսակ ազգային կրոն ու մահը մերժող փիլիսոփայություն: Մարդու մահը Ունամունոն մեկնաբանում է որպես անարդարություն, որի դեմ անհաժեշտ է պայքարել այնպես, ինչպես Դոն Կիխոտն էր պայքարում անիրական գաղափարի համար:

«Ընդունենք ոչինչը, որ հավանաբար սպասում է մեզ մահվանից հետո, որպես անարդարություն, ու պայքարենք նրա դեմ Կիխոտյան համառությամբ՝ անտեսելով իրականությունը»,– գրում է Միգել դե Ունամունոն:

Իրականությունը սկսում է գոյություն ունենալ Ունամունոյի համար ոչ այն պահից, երբ մարդը գիտակցում է իր կարճատև գոյության անհեթեթությունը, այլ միայն այն ժամանակ, երբ մարդը հաղթահարում է այդ սարսափն ու ապրում Դոն Կիխոտի նման՝ պայքարելով հանուն անիրական գաղափարի, հանուն անմահության:

Պատմամշակութային և գեղարվեստական զարգացման գործընթացի հետևանքով Դոն Կիխոտը ենթարկվել է հետաքրքիր մի փոփոխության. նա դուրս է լողացել սերվանտեսյան վեպից և անմահացել իր արդիականությամբ՝ ազգային հոգեբանության վերլուծության ճանապարհին հանդես գալով որպէս ազգային հոգեբանության կրող և խորհրդանիշ:

«Դոն Կիխոտի գեղարվեստական կերպարը տարանջատվել է ստեղծագործությունից և հեղինակից: Այն արդեն գոյություն ունի ինքնին, իսկ նրա մեծությունը կարելի է չափել այն փաստով, թե որքան հաճախ են նրան անդրադարձել հաջորդող սերունդները ջանալով բացահայտել այն նորովի՝ իրենց հոգևոր առանձնահատկությունների համաձայն»<sup>1</sup>:

Պատմաքաղաքական իրադարձություններով պայմանավորված՝ քսաներորդ դարակազմին Սերվանտեսի հերոսին այլ կերպ են մեկնաբանում ժամանակաշրջանի գրող-փիլիսոփաները. այն դառնում է ստեղծագործությունից դուրս գոյություն ունեցող անհատականություն, որ մարմնավորում է Իսպանիայի ճակատագիրը:

Դոն Կիխոտի կերպարի այսպիսի մեկնաբանության սկիզբ է դրել Անիել Գանիվետը «Իսպանական իդեարիում» աշխատության մեջ: «Նրա համար դոն Կիխոտը իդեալական կերպար է, ազգային ոգու մարմնացում»<sup>2</sup>: Այստեղ Գանիվետն անդրադառնում է ազգային հոգեբանության վերլուծության առումով հույժ կարևոր խնդիրների՝ Իսպանիայի հասարակական կյանքի ու ազգային մտածելակերպի վերաթեքավորման անհրաժեշտությանը:

Կերպարի կարևորությունը հրամայական էր ժամանակաշրջանի գրեթե բոլոր մտավորականների համար: Սերվանտեսի վեպը նրանց համար ոչ թե գիրք էր, այլ Գիրք, Աստվածաշունչ: Գրեթե բոլորն անդրադարձել են Դոն Կիխոտի կերպարին, յուրաքանչյուրը, բնականաբար, յուրովի: Մակայն բոլորը Կիխոտը մեկնաբանում են հեղինակից և նրա ստեղծագործությունից տարանջատ, ինքնին գոյություն ունեցող երևույթ՝ որպէս իրականության դրսևորում:

Մակայն փիլիսոփայություն այն դարձել է միայն Ունամունոյի համար:

Կիխոտիզմն այն ընդգրկուն և հարուստ դոկտրինան է, որում ձևակերպված են Ունամունոյի կյանքի գաղափարախոսությունն ու նրա փիլիսոփայության առանցքային խնդիրները: «Կիխոտիզմը մի ամբողջ մեթոդ է, տրամաբանություն և հատկապես կրոն՝ ամենքի ու ամեն ինչի մասին, այսինքն՝ գիտություն հավերժության ու աստվածայինի մասին, հույս՝ արքայի իրականության մեջ»<sup>3</sup>:

<sup>1</sup> *Человек мифотворящий. О литературе Испании, Португалии и Латинской Америки, М., 1988, с. 127.*

<sup>2</sup> *Испытание историей. Очерки испанской литературы 20 века, М., 1973, с. 41.*

<sup>3</sup> *Miguel de Unamuno, A la luz de psicología, Luis Abellan, Editorial Tecnos, S. A. Madrid, 1964, p. 102.*

Ունամունտյի կիստիզմը հավատ է և բարոյականություն: Իր իսկ կյանքի անվերջ հակասություններն ու պարադոքսալ իրավիճակները, իր սեփական քաղաքական դիրքորոշման տատանումները, կյանքի ու մահվան անլուծելի պարադոքսը կիստիզմի ձևավորման անկյունաքարը դարձան: Դոն Կիստոը Ունամունտյի ազգային գաղափարախոսության և աշխարհընկալման առանցքն է: «Ինչ է թողել Դոն Կիստոը եկող սերունդներին,- հարցնում է Ունամունտն ու պատասխանում,- կիստիզմ, և դա քիչ չէ»:

Կիստիզմն ազգային մտածողություն է, փիլիսոփայական մի համակարգ, հանձին որի Ունամունտն փնտրում է արդարացում՝ հոգին կեղեքող հակասություններին: Արդարացում գտնելու այս փափագը դառնում է կիստիզմ, անխուսափելի մահվան դեմ իռացիոնալ բողոք, գիտակցության ու հավատի հավերժական պայքար:

Այս ներքին ողբերգությունը դառնում է աննախադեպ մի գաղափարախոսություն եկզիստենցիալ փիլիսոփայությանն ու հնարավոր դարձնում նախապաշարումներից զերծ իսպանական փիլիսոփայական մտքի ինտեգրումը համաշխարհային փիլիսոփայությանը: «Ընդհանրապես Ունամունտյի հոգևոր էվոլյուցիան դիտվում է նրա Դոն Կիստոի կերպարի հանդեպ դրսևորվող վերաբերմունքի պատմության շղթայում»<sup>4</sup>:

Նրա ստեղծագործական ժառանգության մեջ մասնավորապես կարևորվում է Դոն Կիստոի կերպարի իմաստավորումը:

«Կեցցե Ալոնսո Բարին», «Նորից Դոն Կիստոի մասին», «Մահ Դոն Կիստոին» էսսեները լույս են տեսել 1898 թ., երբ փրկություն խոստացող միակ ճանապարհը Եվրոպան էր, երբ Ունամունտն դեռ Իսպանիայի եվրոպականացման կողմնակիցների թվում էր: «Դոն Կիստոի դամբարան տանող ուղին» փիլիսոփայական էսսեն լույս է տեսնում 1906 թ.՝ քաղաքական դիրքորոշման առումով շրջադարձային ժամանակահատված Ունամունտյի համար: Այդ պահից Դոն Կիստոի կերպարը այլ նշանակություն ու մեկնաբանություն է ստանում. Կիստոը մարմնավորում է Իսպանիան, իսպանական ազգի աննկուն ոգին:

1905 թ. լույս է տեսնում «Դոն Կիստոի ու Սանչոյի կյանքը» ստեղծագործությունը, որում նորից բախվում են մահվան ու անմահության խնդիրներն ու նորից դառնում պայքար անհաս գաղափարի համար, պայքար անմահության համար:

Դոն Կիստոի թափառական ասպետ դառնալու ցանկությունն ու խելագարությունը Ունամունտն մեկնաբանում է որպես անունը եկող սերունդներին թողնելու ու հավերժ ապրելու բռնն ցանկություն:

«Քանի անգամ առավոտյան որսորդության ժամերին երազել է նա, որ համբավն իր կտարածվի այդ անսահման հարթավայրերով, կմտնի յուրաքանչյուր տուն, արձագանք կգտնի մարդկանց հոգիներում ու կհավերժացնի իր անունը տարածության ու ժամանակի մեջ: Փառասիրական երազանքներով էր սնում իր աղքատությունն ու ձանձրությոը ու փափագում անմահություն»<sup>5</sup>:

<sup>4</sup> Человек мифотворящий, с. 127.

<sup>5</sup> Жизнь Дон Кихота и Санчо, СПб, 2002, с. 24.

Ունամունոյի ստեղծագործական ժառանգության կարևորագույն առանձնահատկություններից մեկը, գուցե ամենակարևորը, Դոն Կիխոտի կերպարի իմաստավորումն է՝ որպէս իսպանական ոգու մարմնավորում:

Ունամունոն փնտրում էր մարդու անիմաստ մահվան արդարացում ու պայքարում, ինչպէս Դոն Կիխոտը՝ ի սկզբանէ ձախողման դատապարտված գաղափարի համար: Ունամունոյի անմահության փափագը դառնում է նոր բարոյականություն ու հոգուց բխող հավատի հաղթանակ:

Ունամունոյի էկզիստենցիալ փիլիսոփայական գաղափարախոսության կայացմանը զուգընթաց՝ առավել ցայտուն է դառնում «եկեղեցական» քրիստոնէության քննադատությունն ու առավել արժեքավորում «ներքին» քրիստոնէությունը, այսինքն՝ կիխոտիզմը: Դոն Կիխոտը հանդես է գալիս որպէս ազգային ոգու կրող, ամենայն իրականի ու հոգևորի խորհրդանիշ: Դոն Կիխոտն է իրական քրիստոնէությունը և ոչ կաթոլիկ եկեղեցին, Դոն Կիխոտն է անմահությունը՝ Ունամունոյի և համայն Իսպանիայի: Նա է, որ իր խենթությամբ, անմահանալու իր հաստատ վճռով կարողացավ անմահանալ:

Չմեռնել, չմեռնել ցանկացած գնով, չմեռնել սխրագործություններով, խելացնոր գաղափարներով, հավերժանալ պատմության մեջ, միայն թէ չմեռնել:

Միննույն ժամանակ հեղինակի էկզիստենցիալ փիլիսոփայական համակարգում կարևորագույն տեղ զբաղեցնող կիխոտիզմը յուրատեսակ բողոք է սահմանափակ կաթոլիկ գաղափարախոսության դեմ, բողոք՝ նոր գաղափարախոսության ինտեգրման անհնարինության ու մարդու ազատության սահմանափակման դեմ:

Ունամունոյի կիխոտիզմն այն միակ կրոնն էր, որ կարող էր խլել իսպանացուն կաթոլիկ եկեղեցու ճիրաններից և մտքի ու հոգու ազատություն պարգևել: Այն միակ գաղափարախոսությունն էր, որ կարող էր անտարբերության ճահճից հանել մարդկանց, որոնք «չէին կարող նույնիսկ ենթադրել, որ ինչ-որ մեկը կարող էր կորցնել սթափ դատողությունն ու խենթանալ»<sup>6</sup>:

Այս մարդիկ՝ իր հայրենակիցները, կորցրել էին իրենց հոգիներն ու մոլորվել «խղճուկ դարաշրջանի» խաչմերուկներում:

«Ինչ վերաբերում է այսօրվա իրականությանը, այս խղճուկ հոգիներին կատարելապես բավարարում է իրենց գոյությունը: Մերկ գոյություն՝ սրանով սպառվում են նրանց բոլոր հոգևոր պահանջումները: Նրանք նույնիսկ չեն էլ ենթադրում, որ ֆիզիկական գոյությունից գատ, այլ արժեքներ էլ կան: Բայց արդյոք գոյություն ունեն իրականում: Կարծում եմ՝ ոչ: Եթէ իրապէս գոյություն ունենային ժամանակի ու տարածության մեջ, ապա կտառապէին իրենց վերջավոր լինելու մտքից: Չէ՞ որ հավերժության փափագից ծնված տառապանքն է դառնում Աստծուն գտնելու մարմաջ՝ յուրաքանչյուր մարդու հոգում»<sup>7</sup>:

Հին ու նոր դարաշրջանների բախման քառսում Ունամունոն տեսնում էր մի փրկություն՝ կիխոտիզմ. անհնարինը հնարավոր դարձնելու խենթ գաղափար, հոգու խորքից բխող անսասան հավատ՝ գրեթէ կործանված

<sup>6</sup> *Житие Дон Кихота и Санчо, с. 10.*

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 11:

հայրենիքը փրկելու ու այսպիսով՝ մահը հաղթահարելու: Նա կոչ էր անում հայրենակիցներին ձեռնարկելու մի նոր «խաչակրաց արշավանք»՝ քահանաների, վանականների, գիտունների ու հերցոգների իշխանությունից ազատագրելու Դոն Կիխոտի դամբարանը և վերակենդանացնելու նրան, ով հանուն իր ժողովրդի զոհաբերել էր ամենաթանկ բանը՝ սթափ դատողությունը: «Նրանք գիշեր ու զօր պահպանում են Դոն Կիխոտի դամբարանը, որպեսզի հարություն չառնի ասպետը»<sup>8</sup>: Քահանաները, վանականները, գիտուններն ու հերցոգները սարսափում են, որ հարություն կառնի Դոն Կիխոտ-ժողովուրդը, կցանկանա ազատություն, կազատագրվի կաթոլիկ եկեղեցու իշխանությունից ու հայրենիքի փրկության ուղիներ կգտնի:

Այս գաղափարախոսությամբ Դոն Կիխոտը դառնում է բողոքի կրողը կաթոլիկ գաղափարախոսության դեմ, իսկ կիխոտիզմը՝ մարդուն և Աստծուն միացնող միակ ճանապարհը: «Նրանց, ովքեր գնում են փնտրելու ասպետի դամբարանը, հարկավոր է մի կամուրջ՝ հավատն առ Աստված»<sup>9</sup>:

Եվ երբ գիտակցության ու հավատի անհամատեղելիությունը ծնունդ է տալիս Աստծո գոյության հանդեպ կասկածների, մնում է միայն ստեղծել նրան մարդկային անսահման երևակայության լաբիրինթոսում, քանզի առանց Աստծո կմեռնի անմահության հույսը:

## КИХОТИЗМ МИГЕЛЯ ДЕ УНАМУНО КАК НАЦИОНАЛЬНАЯ РЕЛИГИЯ

МИКАЕЛЯН Л. Г.

### Резюме

Значимость образа бессмертного героя Сервантеса и его роль в идейной борьбе Испании XX в. неоспоримы. Почти все писатели этой эпохи обращались к образу Дон Кихота.

В образе Дон Кихота сосредоточена вся философия Мигеля де Уна-муно – стремление человека к бессмертию, которое Унамуно определяет как субстанцию души человека.

Унамуно трактует желание Дон Кихота стать странствующим рыцарем как тягу к славе и бессмертию. В результате Дон Кихот становится носителем бессмертного испанского духа, а кихотизм – своеобразной национальной религией.

<sup>8</sup> Լույն տեղում, էջ 13:

<sup>9</sup> Լույն տեղում, էջ 18: